

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ

1.1.1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ

2011թ. մարտի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ)

Ամիսները	Նախորդ ամսվա նկատմամբ, %	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %	Շղթայակապ ինդեքսներ (2009=100) ¹
2010^{ՎՊ}			
Հունվար	44.0	102.2	59.0
Փետրվար	108.7	102.6	64.2
Մարտ	119.2	106.9	76.5
Ապրիլ	96.8	112.7	74.1
Մայիս	111.4	107.2	82.5
Հունիս	117.8	99.3	97.2
Հուլիս	106.6	89.9	103.6
Օգոստոս	120.6	96.8	125.0
Սեպտեմբեր	117.6	95.4	147.0
Հոկտեմբեր	86.9	102.2	127.7
Նոյեմբեր	94.3	109.8	120.4
Դեկտեմբեր	109.4	98.0	131.7
2011^{ՎՊ}			
Հունվար	47.6	106.1	62.7
Փետրվար	103.4	100.9	64.8
Մարտ	118.5	100.3	76.7

2011թ. մարտին ՏԱՑ-ը 2010թ. մարտի համեմատությամբ կազմել է 100.3%, իսկ նախորդ ամսվա (2011թ. փետրվարի) համեմատությամբ՝ 118.5%:

¹Շղթայակապ ինդեքսների ժամանակագրական շարքերը հնարավորություն են տալիս հարաբերել ինչպես ցանկացած ամսվա ցուցանիշները, այնպես էլ ստանալ մեկից ավել ամիսների ցանկացած կտրվածքով ժամանակահատվածների հարաբերությունը բնութագրող ինդեքսներ (օրինակ՝ 2011թ. հունվար-մարտը 2010թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 102.2%):

²Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարտ ամսից սպառողական գների ինդեքսների (ՄԳԻ) հաշվարկման համար սպառողական ապրանքների և ծառայությունների կազմի ու կառուցվածքի (տեսակարար կշիռների) հաշվարկման համար հիմք ընդունված բազիսային տարվա փոփոխությամբ պայմանավորված (2010թ.-ը 2005թ.-ի փոխարեն)՝ վերանայվել էին նաև 2011թ. հունվար և փետրվար ամիսների ՄԳԻ-ները: Դրանով պայմանավորված, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2011թ. մարտին (2011թ. ապրիլի 20-ի դրությամբ)» մամուլի հաղորդագրությունում 2011թ. հունվար և փետրվար ամիսների ՏԱՑ-ը վերանայվել էր:

Այս հրապարակման մեջ 2010 և 2011թթ. ըստ ամիսների ՏԱՑ-ի ամբողջական գնահատականների սույն (ծրագրային) վերանայումները պայմանավորված են տարեկան ՀՆԱ-ի վերանայման ժամանակացույցով, որն արտացոլված է Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրում (տես՝ «2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիր» <http://www.armstat.am/file/doc/99462288.pdf>, ՀՀ ՎՊԻ 2010թ. դեկտեմբերի 21-ի թիվ 53-Ն որոշում, ՀՀ ԳՆԱՏ 2011/4(387),21.02.2011թ.), ըստ որի, վերջնական հաշվետու տվյալներով տարեկան ՀՆԱ-ի գնահատականները հասանելի են հաշվետու տարվա ավարտից 1 տարի և 4 ամիս հետո, իսկ դրան հաջորդող տարվա վերանայված գնահատականները՝ տարվա ավարտից 4 ամիս հետո (օր. 2009թ. հաշվետու տվյալներով ՀՆԱ-ի և դրա հիման վրա 2010թ. վերանայված ՀՆԱ-ի գնահատականները հասանելի են դառնում 2011թ. ապրիլի 29-ին): ՏԱՑ-ի վերանայման հիմքը տարեկան ՀՆԱ-ում (առանց արտադրանքի զուտ հարկերի և ՖՄԱԾՕ) տնտեսական գործունեության տեսակների կշիռների փոփոխությունն է, մասնավորապես, 2010թ. համար օգտագործվել են ՀՆԱ-ի 2009թ. վերջնական հաշվետու տվյալներով կշիռները, իսկ 2011թ. համար՝ 2010թ. ՀՆԱ-ի վերանայված տվյալներով կշիռները (տես՝ «ՏԱՑ վերանայման քաղաքականությունը»՝ զետեղված ՀՀ ԱՎԾ 2011թ. հունվարի 25-ի «Տարվա ընթացքում ընթացիկ մակրոտնտեսական ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և հրապարակման աճողական մեթոդից դիսկրետ (զուտ ամսական) մեթոդին անցման մասին» մամուլի հաղորդագրությունում <http://armstat.am/file/doc/99462508.pdf> և «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվարին» տեղեկատվական ամսական զեկույցում http://armstat.am/file/article/sv_01_11a_111.pdf):